ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՅՈՒ ԹՈՒՂԹԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԳԵՐՄԱՆՈՍ Ա. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Սարգիս Մելքոնյան

Է դարի առաջին կեսին Արևելահռոմեական կայսրության վարած միարարական քաղաքականության[1] հետևանքով միջդավանաբանական երկխոսության կիզակետում են հայտնվում քրիստոսաբանական **«մի ներգործություն»** և **«մի կամք»** սահմանումները[2]: Չնայած այն հանգամանքին, որ «միաներգործական-միակամական» վարդապետությունը լայնորեն տարածվում և կայսրության կողմից կանոնականացվում է (638 թ.) Է դարում[3], այնուամենայնիվ այն ծագել է դեռևս Դ դարի երկրորդ կեսին[4] և մինչև Է դարի առաջին կեսը դավանաբանության պատմության մեջ ունեցել է ա**ռնվազն չորս տարբեր աստվածաբանական ընկալումներ**[5]:

---

[1] Այս քաղաքականության մասին տե՛ս **Ch. Lange**, Mia Energeia, Untersuchungen zur Einigungspolitik des Kaisers Heracklius und des Patriarchen Sergius von Constantinopel, Tübingen, 2012, էջ 531-623:

[2] Է դարի առաջին կեսի միջդավանաբանական երկխոսության հիմքում ընկած վարդապետության մասին տե՛ս **Ս. Մկրտչյան, Ս. Մելքոնյան,** Ալեքսանդրիայի 633 թ. ժողովը՝ Արևելահռոմեական կայսրության միարարական նոր քաղաքականության համատեքստում // «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2017, թիվ 3 (59), էջ 156-173:

[3] Ի Քրիստոս «մի ներգործություն» սահմանումն առաջին անգամ պաշտոնական գրության մեջ հանդիպում է Ալեքսանդրիայի 633 թ. ժողովի հավատո ձեռնարկում (տե՛ս **Ս. Մկրտչյան, Ս. Մելքոնյան,** նշվ. աշխ., էջ 163-173): «Մի կամք» սահմանումը կայսրության ողջ տարածքում կանոնականացվել է այսպես կոչված «Էկթեսիսով», որը Հերակլիոս Ա. կայսեր անունով հրապարակվել է 638 թ. (տե՛ս **Ch. Lange**, նշվ. աշխ., էջ 606-614):

[4] «Մի ներգործություն» եզրն առաջին անգամ հանդիպում է Ապողինար Լաոդիկեցուն (մոտ. 309-390 թթ.) վերագրվող գրվածքներում (տե՛ս **A. Grillmeier**, Jesus der Christus im Glauben der Kirche, Band 1., Von der Apostolischen Zeit bis zum Konzil von Chalcedon (451), Freiburg-Basel-Wien, 2004, էջ 488-492):

[5] Տե՛ս **C. Hovorun**, Christological Controversies in the Seventh Century, Leiden-Boston, 2008, էջ 5-6:

«Միաներգործական-միակամական» վարդապետության հիմքի վրա Արևելահռոմեական կայսրության ժամանակի կայսր Հերակլիոս Ա.-ը և Կոստանդնուպոլսի Սերգիոս Ա. պատրիարքը ձգտում էին վերամիավորել Քաղկեդոնի 451 թ. ժողովի հետևանքով պառակտված քրիստոնյա աշխարհը՝ ապահովելով կայսրության ներքին խաղաղությունն ու արտաքին ամրությունը[1], ինչպես նաև Կոստանդնուպոլսի աթոռի գերակա դիրքը մյուս եկեղեցիների նկատմամբ:

Հերակլիոս Ա. Կայսեր վարած եկեղեցական քաղաքականության հետևանքով 630-634 թթ. ընթացքում Արևելքի ոչ-քաղկեդոնական եկեղեցիների (**Ասորի Հակոբիկյան, Եգիպտոսի, Հայոց և Պարսկաստանի Նեստորական**) և քաղկեդոնականների միջև տեղի են ունենում չորս հանդիպում-ժողովներ, որոնցից երեքը Հերակլիոս կայսեր մասնակցությամբ, որտեղ երկխոսության նյութ է հանդիսանում եկեղեցական միության բանաձևի հարցը[2]: Այնուամենայնիվ միարարական այս քաղաքականությունը չի պսակվում հաջողությամբ և «միաներգործական-միակամական» վարդապետության հետևորդները, բացառությամբ Հերակլիոս կայսրի, բանադրվում են Կոստանդնուպոլսի 680/681 թթ. ժողովին:

Կայսրության կողմից որդեգրած վերոնշյալ միարարական քաղաքականության համատեքստում Հայոց եկեղեցու հետ բանակցությունները տեղի են ունենում 633 թ. Կարինի ժողովում, որտեղ ժամանակի Հայոց կաթողիկոս Եզր Ա. Փառաժնակերտցին ընդունում է առաջադրված վարդապետության ուղղադավանությունը և հաղորդական միության մեջ է մտնում Հերակլիոս կայսեր հետ[3]: Չնայած այս կարևորագույն իրադարձությանը, որը դեռևս առանձին ուսումնասիրության կարիք ունի, Է դարի հայոց աստվածաբանական մատենագրության մեջ դժվար է գտնել որևէ

---

[1] Խնդիրը նրանում էր, որ Արևելահռոմեական կայսրության արևելյան և հարավարևելյան նահանգների բնակչության մեծ մասը ոչ-քաղկեդոնական դավանանք ունեին և կայսրության վարած ճնշումների քաղաքականության հետևանքով հաճախ ապստամբում էին՝ անցնելով Կոստանդնուպոլսի թշնամիների կողմը:

[2] Տե՛ս **Ch. Lange**, նշվ. աշխ., էջ 553-581:

[3] Տե՛ս **Ս. Մելքոնյան**, Թեոդոսուպոլիս-Կարինի ժողովի թվականի հարցի շուրջ // «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածու, հ. Ժ, Երևան, 2015, էջ 171-185:

գրություն, որտեղ մանրամասնությամբ խոսվում է ի Քրիստոս «ներգործության» կամ «կամքի» շուրջ սահմանումների մասին[1]: Դավանաբանական առաջին հայերեն գրությունը, որը համակարգված ձևով անդրադառնում է քրիստոսաբանական այս եզրերին վերոնշյալի համատեքստում, Ը դարի Հայոց եկեղեցու իմաստասեր վարդապետ **Սբ. Ստեփանոս Սյունեցու** գրած թուղթն է՝ ուղղված Կոստանդնուպոլսի **Գերմանոս Ա. պատրիարքին** (715-730 թթ.)[2]: Այն կարևորագույն սկզբնաղբյուր է ոչ

---

[1] Ե-Ը դարերին առնչվող կան ևս երկու գրություն, որտեղ խոսվում է ի Քրիստոս «ներգործության» և «կամքի» մասին: Դրանք են «Սրբոց վարդապետացն Հայոց Մավսէսի եւ Դաւթի Հարցմունք ընդ երկաբնակս չարափառնս» (տե՛ս **Գիրք Ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց**. մանաւանդ աշխարհաւեր ժողովոյն քաղկեդոնի. արարեալ սրբազանից վարդապետաց, Նոր Ջուղա, 1688, էջ 5-269; Մատենագիրք Հայոց, Ի. հատոր, ԺԲ. դար, Յաւելուած, Երեւան, 2014, էջ 660-725) և «Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոց ըստ առաքելասահման աւանդիցն եկեղեցւոյ Քրիստոսի, հանդերձ հաւատաբանութեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց, ասացեալ սրբո վարդապետին **Սահակայ Հայոց կաթուղիկոսի** եւ մեծի թարգմանչի ընդդեմ երկաբնակաց նեստորականացն» (տե՛ս **Գիրք Թղթոց**, Թիֆլիս, 1901, էջ 413-493) բավականին ծավալուն երկերը: Սակայն բանասիրության մեջ այս երկու գրություններն էլ համարվում են հետագա դարերի ստեղծագործություններ (տե՛ս **R. W. Thomson**, “The Historical Compilation of Vardan Arewelc’i” // Dumbarton Oaks Papers 43, 1989, էջ 170, N 5; **Սահակ վարդապետ (Մռուտ)**, Բացայայտութիւն, Երուսաղէմ, 1994):

[2] Գերմանոս Ա. պատրիարքը սերում էր կայսրության նշանավոր տոհմերից մեկից: Նրա հայրը՝ պատրիկ Հուստինիանոսը, ղեկավարող պաշտոններ էր զբաղեցրել դեռ Հերակլիոս Ա.-ի օրոք: 680/681 թթ. ժողովից հետո 712 թ. Իր «էդիկտով» «միաներգործական-միակամական» վարդապետության կանոնականացման մեկ այլ փորձ է կատարում Արևելահռոմեական կայսրության հայազգի կայսր Փիլիպպիկոս-Վարդանը, ում այդ հարցում իրենց աջակցությունն են ցույց տալիս Կրետեի մետրոպոլիտ Անդրեասն ու այն ժամանակ Կյուզիկոսի մետրոպոլիտ **Գերմանոսը:** Սակայն Փիլիպպիկոս-Վարդանի մահվանից հետո վերջինս հրաժարվում է «միակամական» վարդապետությունից՝ հայտնելով, որ իր այդ դիրքորոշման պատճառ է եղել կայսեր ճնշումները և արդեն պատրիարք եղած ժամանակ՝ 716 թ. Կոստանդնուպոլսում ժողով է գումարում, որտեղ ևս մեկ անգամ վերահաստատում են 680/681 թթ. ժողովի որոշումները: Այնուամենայնիվ այս ամենը վկայում է այն մասին, որ Գերմանոս պատրիարքը լավագույնս տիրապետում էր խնդրի մանրամասներին և պատահական

միայն Քրիստոսի «ներգործության» և «կամքի» շուրջ խնդիրներում Հայոց եկեղեցու վարդապետական դիրքորոշումը հասկանալու համար, այլ նաև առհասարակ քրիստոսաբանական հարցերի շուրջ հայ վարդապետական մտքի առանձնահատկությունների ուսումնասիրության տեսանկյունից: **Ուստի անհրաժեշտ ենք համարում մեր հոդվածի շրջանակներում ճշտել որոշ պատմական հարցեր, որ առկա են գիտության մեջ մեզ հետաքրքրող գրության վերաբերյալ:**

Ստեփանոս Սյունեցու նշյալ դավանաբանական թուղթը պահպանվել է «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ հետևյալ վերտառությամբ. **«Պատասխանի թղթոյն՝ զոր գրեաց տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, առ տէր Գերմանոս Կոստանդնուպոլսի հայրապետն, որք երկու բնութիւնս եւ երկուս ներգործութիւնս եւ երկուս կամս խոստովանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ որք ի կենդանարար Խորհուրդն ջուր խառնեն, հետեւեալք ժողովոյն Քաղկեդովնի»**[1], սակայն Հակոբ Քեոսեյանի աշխատասիրությամբ վերահրատարակվել է «Մատենագիրք Հայոց»-ի Զ. հատորում՝ **«Յաղագս ժողովոյն սուրբ հարցն՝ Աթանասի, Բարսղի, Աստուածաբանի, Նիւսացւոյ, Յովհաննու, Կիւրղի, Պրոկղի, Երանոսի Եպիփանու Եփրեմի, Մեղիտոսի և նոցին նմանեաց. թուղթ երանելոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ պատասխանի թղթոյն Հոռոմոց Գերմանոսի պատրիարգի Կոստանդինուպաւլսի, զոր**

չէ, որ նա է հերթական անգամ փորձ անում հայերին միավորել կայսերական եկեղեցուն (Գերմանոս պատրիարքի մասին տե՛ս **И. Андреевъ**, Германъ и Тарасій, патріархи Константинопольские, Сергіевъ Посадъ, 1907, էջ 1-19; **H.-G. Beck,** Kirche und Theologische Literatur im Byzantinischen Reich, München, 1959, էջ 473-476; **G. Ostrogorsky,** Geschichte des Byzantinischen Staates, Dritte, durchgearbeitete Auflage, München, 1963, էջ 127-130):

[1] **Գիրք թղթոց**, Թիֆլիս, 1901, էջ 373-395: Դավանաբանական այս թուղթն առաջին անգամ հրատարակվել է 1688 թ. Նոր Ջուղայում հետևյալ վերնագրով. **«Թուղթ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և իմաստասիրի պատասխանի թղթոյն Գերմանոսի պատրիարգի Կոստանդնուպօլսի»** (տե՛ս **Գիրք Ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց**. մանաւանդ աշխարհաւեր ժողովոյն քաղկեդոնի. արարեալ սրբազանից վարդապետաց, Նոր Ջուղա, 1688, էջ 300-375): Այս հրատարակությունը հատվածաբար տարբերվում է «Գիրք թղթոց»-ի օրինակից:

ինքն իսկ եբեր» վերնագրի ներքո[1]:

Այս երկրորդ հրատարակությունն առավել սրբագրված և ամբողջացված քննական բնագիր է, որն աշխատասիրողը կազմել է «Գիրք թղթոցի» նշյալ օրինակի և Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 948 ձեռագրի[2] համեմատությամբ[3], ուստի մեր ուսումնասիրության մեջ կառաջնորդվենք Հակոբ Քեոսեյանի հրատարակած տարբերակով:

Թղթի գրման հանգամանքները

Սբ. Ստեփանոս Սյունեցու կենսագրական այլ տեղեկությունների հետ մեկտեղ Կոստանդնուպոլսի Գերմանոս Ա. պատրիարքին ուղղված թուղթը հայ պատմագիրներից հիշատակում են **Կիրակոս Գանձակեցին** (ԺԳ դ.)[4], **Մխիթար Այրիվանեցին** (ԺԳ դ.)[5] և **Ստեփանոս Օրբելյանը** (ԺԳ-ԺԴ դդ.)[6], որոնցից միայն վերջին երկուսն են մանրամասն տեղեկություն հայտնում դրա գրման նախապատմության մասին: Ըստ Գարեգին արք. Հովսեփյանի, նրանք իրենց ձեռքի տակ ունեցել են Սյունեցու կենսագրության մեկ այլ աղբյուր, որին հավանաբար անծանոթ են նրանցից առաջ եղած պատմիչները, որոնք նույնպես հիշատակություններ ունեն

---

[1] **Մատենագիրք Հայոց**, Զ. հատոր, Ը դար (յաւելուած), Երեւան, 2007, էջ 521-542 (այսուհետ՝ **Մատենագիրք Հայոց**, հտ. Զ.):

[2] Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվ. մատենադարանի **թիվ 948** ձեռագիր, եր. 231բ-250բ:

[3] Տե՛ս **Յ. Քէոսէեան**, Ստեփանոս Սիւնեցին եւ նրա մատենագրական ժառանգութիւնը // **Մատենագիրք Հայոց**, հտ. Զ., էջ 99:

[4] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ **Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի**, Երևան, 1961, էջ 29:

[5] Տե՛ս Ստորագրութի. պատմութե. Բազմերջանիկ Սբ. Եւ փառաւորեալ Հրպին. Ստեփանոսի Սիւնեաց Եպսի.յաւրինեալ ի տր. **Մխիթար Վրդպտէ. Յեպսէ**. Սբ. Ուխտին Այրավանաց, **Գ. Արք. Յովսէփեանց**, Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր // «Սիոն» ամսագիր, Երուսաղէմ, 1931, հ. 7, էջ 215 (այսուհետ՝ **Մխիթար Այրիվանեցի**):

[6] Տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան** Արքեպիսկոպոսի Սիւնեաց, հտ. Ա, Փարիզ, 1859, էջ 180 (այսուհետ՝ **Ստեփանոս Օրբելյան**):

սրբի վարքից[1]: Հովսեփյանն այդ աղբյուրին տալիս է **«Սկզբնական»** անունը[2]:

Մխիթար Այրիվանեցու[3] և Ստեփանոս Օրբելյանի[4] համաձայն, ուսման նպատակով Կոստանդնուպոլսում եղած ժամանակ՝ Սյունեցին հաճախ էր այցելում Սուրբ Սոֆիայի տաճար և, հավանաբար, ներկա գտնըվում տարբեր արարողությունների, որ կատարվում էին այնտեղ: Ուստի նրան անձամբ ճանաչում էր նաև Կոստանդնուպոլսի Գերմանոս Ա. պատրիարքը: Նույն տաճարում մատուցված Պատարագի ժամանակ[5] Սյունեցուն հրավիրում են Հաղորդություն ստանալու, սակայն վերջինս հրաժարվում է՝ նշելով, որ առանց իր պատրիարքի (այսինքն Հայոց կաթողիկոսի) հրամանի չի կարող նրանց (քաղկեդոնականների) հետ հաղորդվել[6]: Այս դեպքով հետաքրքրված՝ հայ վարդապետին իր մոտ է կանչում Գերմանոս պատրիարքը և հարցուփորձ է անում Հաղորդությունը մերժելու պատճառների մասին, ապա, ըստ երևույթին խնդիրը մանրամասն հասկանալու համար, հայերի դավանաբանական առանձնա-

---

[1] Տե՛ս **Գ. Արք. Յովսէփեանց**, Մխիթար Այրիվանեցի. նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր // «Սիոն» ամսագիր, Երուսաղէմ, 1931, հ. 2, էջ 50-52:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 50:

[3] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի,** էջ 215:

[4] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 178:

[5] Ըստ Մխիթար Այրիվանեցու, Պատարագը լինում է Սուրբ Ծննդյան և Հայտնության տոնին (տե՛ս **Մխիթար Այրիվանեցի,** էջ 215): Հետևաբար հավանական է, որ պատարագիչ հոգևորականը եղած լինի հենց Գերմանոս պատրիարքը (եթե անգամ պատարագիչը չի եղել, ամեն դեպքում վստահաբար ներկա է եղել Պատարագին), ինչի պատճառով էլ Սյունեցու կողմից Հաղորդության մերժելու հանգամանքին նա անձամբ է անդրադառնում:

[6] Մխիթար Այրիվանեցու պատմության համաձայն, այս Պատարագին մասնակցում էր նաև Ստեփանոս Սյունեցու ընկերն ու ուղեկիցը՝ Գրիգոր Գռզիկ անունով, ով Կ. Պոլիս էր եկել Սյունեցու հետ միասին՝ կրկին ուսման նպատակով: Ուստի, ըստ Այրիվանեցու, Հաղորդություն ընդունելու են կանչում նաև Գրիգորին, ինչից նա նույնպես հրաժարվում է՝ տալով նույն պատասխանը (տե՛ս **Մխիթար Այրիվանեցի,** էջ 215): Ստեփանոս Օրբելյանը լռում է այս մասին և այս իրադարձության շարադրանքում հիշատակում է միայն Սյունեցուն (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 178):

հատկությունների վերաբերյալ գրավոր **«խոստովանություն»** է խընդրում[1]: Նշյալ գրությունից պատրիարքը պարզում է, որ հայերն ընդունում են միայն առաջին երեք «Տիեզերաժողովները», իսկ Քաղկեդոնի 451 թ. ժողովը մերժում են[2]: Սյունեցու գրավոր «խոստովանության» բովանդակությունից այլ մանրամասներ հայտնի չեն, սակայն պատրիարքը հավանաբար դրանից իմանում է, որ Հայոց եկեղեցին՝ «մի բնություն» ասելով հետևում է Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացուն և ոչ թե Եվտիքեսին, ում նզովում է: Իսկ քաղկեդոնյան «երկու բնություն» սահմանումը մերժում է, քանի որ դրանում նեստորականություն է տեսնում:

Ելնելով այս երկխոսությունից՝ Գերմանոս պատրիարքը հայերին ուղղված դավանաբանական մի թուղթ է գրում և Ստեփանոս Սյունեցու միջոցով ուղարկում է Հայաստան: Թղթում Կոստանդնուպոլսի պատրիարքը ջանում է հիմնավորել քաղկեդոնական դավանանքի հականեստորական լինելը, ինչի համար իր ձևակերպումների մեծ մասում նա հղում է կատարում Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացուն՝ գրության առաջամասում տեղադրելով նաև սուրբ վարդապետի՝ Նեստորին ուղղված տասներկու նզովքները[3]: Շարադրանքի մյուս հատվածում Գերմանոս պատրիարքն արդարացնում է Լևոն պապի «Տոմարի» երկաբնակ սահմանումները որպես Եվտիքեսի մոլար «մի բնություն» վարդապետության հակաճառություն: Այս գրությամբ Կոստանդնուպոլսի պատրիարքը հույս ուներ միավորել հայերին կայսերական եկեղեցու հետ:

Կոստանդնուպոլսում, Աթենքում և Հռոմում թարգմանած հայրաբանական երկերի հետ միասին Ստեփանոս Սյունեցին Դվին է բերում նաև պատրիարքի նշյալ գրությունը և Հայոց կաթողիկոսի ցուցումով կազմում է դրա պատասխանը:

---

[1] Սյունեցու գրավոր «խոստովանության» մասին հիշատակություն կա միայն Գերմանոս պատրիարքի՝ հայերին ուղղված թղթում (տե՛ս **Գիրք թղթոց**, Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 360-361 (այսուհետ՝ **Գերմանոս Ա-ի թուղթը**); լատ. բնագիրը տե՛ս **J.-P., Migne,** Patrologiae Greaecae, Tomus XCVIII, S. P. N. Germani Archiepiskopi Constantinopoltanim, Petit-Montruge, 1865, p. 135-146; Գերմանոս պատրիարքի թղթի մասին ավելի մանրամասն տե՛ս **L. Lamza**, Patriarch Germanos I. von Konstantinopel (715-730) // Das östliche Christentum, Neue Folge, Heft 27, Würzburg, 1975, էջ 122-124):

[2] **Գերմանոս Ա-ի թուղթը,** էջ 361:

[3] Նույն տեղում, էջ 361-363:

Գերմանոս պատրիարքին ուղղված պատասխան թղթի գրման մասին հայ մատենագրության մեջ կա երեք հիմնական պատմություն:

Առաջինը Մխիթար Այրիվանեցու հաղորդածն է, ով երկու անգամ և տարբեր հանգամանքներով է հիշատակում Սյունեցու վերադարձը: Նախ՝ Գագիկ Այիվանեցու կամ Գոգիկի հետ և նշում է միայն Գերմանոս պատրիարքի թղթի բերելը, երբ, ըստ պատմիչի **«մեծ իմաստասէրն Յոհան Աւձնեցին թողեալ էր զաթոռ կաթողիկոսութեանն և ստացեալ վարս կրաւնաւորականս, և տէր Դաւիթ դեռ ոչ ևս էր նստեալ յաթոռ, տեսեալ սրբոյն Ստեփաննոսի, եթէ ոչ ումեք փոյթ է վս. թղթոյն, զոր ինքն եբեր ի Հոռոմոց, երթեալ ի Դուին, նստեալ, գրէ պատասխանիս, զՔսի. Խաղաղութեն., յաւգնապաճոյճ հանճարով և գիտութբ.՝ բան առ բան լուծանելով, ցյառասպելահաւդ բան նց. և առաքեաց, զոր լուեալ գազանացան սրտիւք. և եղծաւ ամ. իմաստութիւն նոցայ»**[1]**:** Երկրորդ անգամ Այրիվանեցին Սյունեցու վերադարձը նկարագրում է առանց Գագիկ Գոգիկի՝ հիշատակելով նաև Հռոմից բերված երեք գրքերը՝ **«հասանէ ի Դուին եւ մատուցանէ զգրեանն առաջի տն. Դաւթի հպտի., զոր տեսեալ, զուարճացաւ յոյժ, և սիրեալ զսբն. և պատուեալ ըստ անձին իւրում, ապա տայ ի նա զամ. գործս հոգևորս տան կթղկոսարանին»**[2]**:**

Սյունեցու վերադարձի և Գերմանոս պատրիարքին ուղղված թղթի գրման պատմության **երկրորդ** տարբերակը Ստեփանոս Օրբելյանն է հաղորդում: Հիմնականում հետևելով Մխիթար Այրիվանեցուն՝ նա, ըստ Գարեգին արք. Հովսեփյանի[3], խմբագրել է վերջինիս հայտնած տեղեկությունները՝ գրելով հետևյալը. **«Եւ էր կաթողիկոս Հայոց երանելին Յովհան օձնեցին սրբեալ զաշխարհս յաղանդոյն Եզրայ. եւ ինքն վախճանեալ. եւ Դաւիթ նստեալ ի տեղին, այն որ յԱրամաւնս եդ զաթոռն կաթողիկոսութեան: Մատոյց առաջի նորա զգրեանսն եւ զթուղթն Գերմանոսի. ընդ որ յոյժ սխրացեալ կաթողիկոսին՝ անտանելի լնոյր խնդութեամբ եւ առաւել քան զառաւել պատուէր եւ փառա-**

---

[1] **Մխիթար Այրիվանեցի**, էջ 215:

[2] Նույն տեղում, էջ 238:

[3] Տե՛ս **Գ. Արք. Յովսէփեանց**, նշվ. աշխ., էջ 119:

ւորէր զսուրբն Ստեփաննոս: Եւ հրամայեաց գրել նմա պատասխանի թղթոյն զոր ինքն եբեր. զոր եւ գրեաց յոյժ զարմացուցիչ բանիւք. եւ արար լուծումն բան առ բան թղթոյն պախարակելով զկրսեր և տգէտ իմացուածս նոցա. որ ունի օրինակ զայս «զՔրիստոսի խաղաղութիւնն առբերելով»»[1]:

Ստեփանոս Սյունեցու վերադարձի պատմության երրորդ տարբերակը պահպանվել է Հայսմավուրքներում, ըստ որի. «[Ստեփանոս] եկեալ առ կաթողիկոսն Բաբգէն եւ եցոյց նմա զթուղթն Գերմանոսի: Իսկ Բաբգէն ձեռնադրեաց զնա եպիսկոպոս առաքելական աթոռոյն Սիւնեաց նահանգին»[2]: Այս հիշատակությունը պատճառ է հանդիսացել, որպեսզի մի շարք ուսումնասիրողներ Գերմանոսի թղթի հասցեատեր համարեն «Բաբկեն կաթողիկոսին»[3]: Սակայն սա սխալմունք է, քանի որ Ը դարում Հայոց եկեղեցին Բաբկեն անունով կաթողիկոս չի ունեցել: Այստեղ հավանաբար խոսքը գնում է Սյունիքի Բաբկեն իշխանի մասին, ով մեկ այլ իշխանի հետ՝ Քուրդիկ անունով, դիմում են Դավիթ Ա. Արամոնեցի կաթողիկոսին, որպեսզի վերջինս Ստեփանոս Սյունեցուն ձեռնադրի Սյունիքի մետրոպոլիտ[4]:

Հայսմավուրքում տեղ գտած այսպիսի սխալմունքի պատճառ է հանդիսացել այն, որ Ստեփանոս Սյունեցին հավանաբար նախապես վերադարձել է Սյունիք և իր հետ բերած այլ գրքերի հետ միասին վերոնշյալ **Բաբկեն իշխանին** է հանձնել նաև Գերմանոս պատրիարքի թուղթը[5]: Ինչպես տեսնում ենք Մխիթար Այրիվանեցու հաղորդած տեղեկությունից, Սյունեցին, տեսնելով, որ իր բերած դավանաբանական թուղթն ուշադրության չեն արժանացնում, **մեկնում է Դվին:** Սա իսկապես հիմնավորում է այն հանգամանքը, որ Սյունեցին նախապես ոչ թե Դվին, այլ իր հայրենի Սյունիք է ժամանել: Օրբելյանն այս հատվածը խմբագրել է և իր

---

[1] **Ստեփանոս Օրբելյան**, էջ 180:

[2] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, էջ 238, ծանոթ. 4; հմմտ. **Մ. Վրդ. Գրիգորեան**, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ, 1958, էջ 11:

[3] Տե՛ս **L. Lamza**, նշվ. աշխ., էջ 122, ծանոթ. 46:

[4] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, էջ 238; **Ստեփանոս Օրբելյան**, էջ 180:

[5] Տե՛ս **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հատոր Բ., Վենէտիկ, 1785, էջ 556:

պատմությունն անմիջապես սկսում է Դվինից, ուր արդեն կաթողիկոսական գահին էր նստել Դավիթ Ա. Արամոնեցին, ում հրամանով էլ Սյունեցին գրում է Գերմանոս պատրիարքին ուղղված պատասխան թուղթը:

Սա պետք է տեղի ունեցած լինի 728/729 թ.՝ հաշվի առնելով, որ Սբ. Հովհաննն Օձնեցին արդեն վախճանվել էր: Ըստ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի, Սյունեցու հեղինակած դավանաբանական թուղթը Գերմանոս պատրիարքին այդպես էլ չի հասել, քանի որ, ինչպես կարծում է Օրմանյանը, Կոստանդնուպոլսի պատրիարքը 728-ին արդեն պետք է մահացած լիներ[1]:

Մենք այս կարծիքը չենք կիսում, քանի որ ավելի նոր ուսումնասիրություններում հիմնավորված է, որ Գերմանոս Ա. պատրիարքը մահացել է 730-ին[2], իսկ Մխիթար Այրիվանեցին հստակ հիշատակում է, որ Սյունեցու թուղթն ուղարկվել է. «**և առաքեաց, զոր լուեալ գազանացան սրտիւք**»[3]:

Այսպիսով, Սբ. Ստեփանոս Սյունեցու՝ Գերմանոս պատրիարքին ուղղված թուղթը գրվել է 728/29 թ., ժամանակի Հայոց կաթողիկոս Դավիթ Ա. Արամոնեցու հրահանգով՝ սահմանելով Հայ եկեղեցու քրիստոսաբանությունը, ըստ որի, Քրիստոս ունի **«մի բնություն, մի ներգործություն և մի կամք»**:

ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ ԹՈՒՂԹԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԳԵՐՄԱՆՈՍ Ա. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Սարգիս Մելքոնյան

Բանալի բառեր՝ *Սբ. Ստեփանոս Սյունեցի, Գերմանոս Ա. Կոստանդնուպոլսեցի, «մի ներգործություն», «մի կամք», միակամություն, Կարինի ժողով, Հայոց եկեղեցու քրիստոսաբանություն:*

Քրիստոսի «մի ներգործության» և «մի կամքի» վարդապետության շուրջ է դարի առաջին կեսին ծավալված միջեկեղեցական դիսկուրսներին Հայոց եկեղե-

---

[1] Տե՛ս **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հատոր Ա., Կոստանդնուպոլիս, 1912, սյուն 863:

[2] Տե՛ս **L. Lamza,** նշվ. աշխ., էջ 157-173:

[3] **Մխիթար Այրիվանեցի**, էջ 215:

ցին իր պաշտոնական դիրքորոշումը հայտնում է 633 թ. Կարին քաղաքում տեղի ունեցած ժողովի ժամանակ: Սակայն նույն դարի հայ աստվածաբանական մատենագրության մեջ գրեթե չի հանդիպում մի երկ, որտեղ քննության են առնված ի Քրիստոս «մի ներգործություն» և «մի կամք» սահմանումները: Առաջին հայ աստվածաբանը, ով մանրամասնությամբ անդրադառնում է այս թեմային, Ը դարի մեծանուն վարդապետ Սբ. Ստեփանոս Սյունեցին է: Նա այս խնդրի մասին գրում է Կոստանդնուպոլսի Գերմանոս Ա. պատրիարքին ուղղված իր դավանաբանական թղթում՝ սահմանելով Հայոց եկեղեցու քրիստոսաբանության ուղղադավանությունը: Մեր հոդվածով ուսումնասիրության ենք ենթարկել նշյալ դավանաբանական թղթի գրման պատմական հանգամանքները՝ ցույց տալով, որ գրությունը ոչ միայն Ստեփանոս Սյունեցու կարծիքն է, այլ նաև Հայոց եկեղեցու պաշտոնական դիրքորոշումն է քրիստոսաբանական վիճելի հարցերի շուրջ, որ առկա էին Ը. դարի առաջին կեսին քաղկեդոնականների հետ:

ПОСЛАНИЕ СВ. СТЕПАНОСА СЮНЕЦИ К ПАТРИАРХУ КОНСТАНТИНОПЛЯ ГЕРМАНУ I.

Саргис Мелконян

Ключевые слова *– Св. Стефанос Сюнеци, Германос I. Константинопольский, «единая энергия», «единая воля», монофелитство, Каринский собор, христология Армянской церкви*

В богословском дискурсе об учении «единой энергии» и «единой воли» Христа в первой половине VII века Армянская церковь свою официальную позицию выразила во время собора в Карине 633 г. Однако в армянских богословских писаниях того же века почти не говорится о проблеме «единой энергии» и «единой воли» Христа. Первый армянский богослов, который подробно пишет об этой теме, является великий вардапет VIII века Св. Стефанос Сюнеци. Он пишет об этом вопросе в своем догматическом послании Патриарху Константинопольскому Германосу I.: определяя православия христологии Армянской церкви. В этой статье мы рассматриваем это догматическое послание в историческом контексте: показывая, что вышеупомянутое послание – это не просто послание одного богослова к другому, но официальная позиция Армянской церкви вокруг спорных христологических вопросов, которые были с халкидонитами в первой половине VIII века.

THE EPISTLE OF ST. STEPHANOS OF SYUNIK TO PATRIARCH OF CONSTANTINOPLE GERMANOS I.

Sargis Melkonyan

Keywords: *St. Stephan of Syunik, Germanos I. of Constantinople, «mia energeia», «mia thelema», monotheletism, the christology of the Armenian church.*

The Armenian Church defined its official position concerning with the theological discourses of the first half of the VII century about the doctrine of “one energy” and “one will” of Christ during the council in Karin in 633. However, there was almost ni mention of definitions of “one energy” and “one will” of Christ in the Armenian theological texts of the same century. The first Armenian theologian who writes in detail about dhis subject is the great vardapet of VIII century St. Stephanos of Syunik. He wrote about this question in his dogmatic epistle to patriarch of Constantinople Germanos I. determining the orthodoxy of Christology of the Armenian Church. We consider this dogmatic epistle in the historical context and showing that the above-mentioned epistle is not only the ordinary epistle frome one theologian to another, but the official position of the Armenian Church around disputed Christological issues with the chalcedonians in the first half of the VIII century.